

ԱՐՄԱՎԻՐՅԱՆ ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԾԱՆՄԱՆ ՃՇՏՈՒՄ

Մ. Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Արգիշթիխինի (Արսավիր) ուրարտական վարչական կենտրոնի՝ 1983 թ. պեղումների ժամանակ, միջնադարյան մի հորի հյուսիսային պատի վերին շարքում հայտնաբերվել է 5 տողից բաղկացած, Արգիշթի I-ին հիշատակող մի արձանագրություն, որը հաղորդում է Վանի թագավորության սեպագրերում բաղմիցս հանդիպող *ari* կառույցի փաստը:

Արձանագրության վերծանումը, որ առանձին դժվարություն չի ներկայացնում, հրատարակվել է 1984 թ., «Պատմա-բանասիրական հանդեսի» № 4-ում¹, հուշարձանը պեղող Ռ. Թորոսյանի ու Ս. Հմայակյանի հեղինակությամբ:

Այնպիսով ղտանք առանձին հոգվածի ձևով ներկայացնել մասնագետներին մեր դրսողություններն ու մասնավորապես բառամեկնությունները այդ առթիվ, քանի որ նշված ընթերցումը, կարծում ենք, չի կարող համոզիչ լինել փաստերին ծանոթ մասնագետի համար:

Արձանագրության բովանդակությունն է՝

- 1 Ar-giš-ul-še
 1 Mī-nu-a-hi-ni-še
 1-ni² É 'a-ri šū-u-ni²
 1 a-ši-hu-si-ni³ pi³-i
 5 X LIM I MĒ ka-pi³ is-ti-ni²

Մեր թարգմանությամբ՝ (1) Արգիշթին (2) Մինուայան (3) այս 'ari-ն⁴ բարձրացրեց (°)⁵ (4) վահանանոցի⁶ տակ (=ստորոտում)⁷. (5) X հպարտ I հարյուր «քափի» այնտեղ [կար]:

Այստեղ մեր դիտողությունները տալիս ենք ծանոթագրությունների կարգով:

2 Ըստ հրատարակության՝ —nē—, համաձայն ուրարտագետ Հ. Կարադոջյանի տառադարձման:

3 Ըստ հրատարակության՝ pe: Մենք պահպանում ենք ավանդական տառադարձումը, հիմք ունենալով e/ի հնչյունների անկայունությունը, ինչպես և այն հանգամանքը, որ նշված ձայնավորները բառավերջում գուցե և չեն հնչել:

4 Մեր կարծիքով ռազմապաշտպանական նշանակության կառույց:

Արձանագրության հրատարակողները միանգամայն ճիշտ են նկատել, որ նմանապիղ արձանագրությունների համեմատությամբ այս նոր բնագիրը մյուսներից տարբերվում է իր 4-րդ տողի սլարունակությամբ՝ É a-ši-hu-si-ni pi-i, որ թարգմանվում է «É a-ši-hu-si-ի տակ» անսովոր ձևով:

Այս արտահայտությանը կանդրադառնալով վերջում:

Հրատարակողները, բնական է, փորձել են թարգմանել ողջ բնագիրը, ասել իրենց նոր խոսքը, որին էլ չենք կարող չանդրադառնալ:

1 Քարի նկարագիրը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդեսի» նույն համարում:

Այսպես, ^Բari-ն, ինչպես հայտնի է, մասնագիտական գրականության մեջ ընդունված է թարգմանել «ամբար», «հացահատիկի շտեմարան» իմաստով, համաձայն Գ. Մելիքիշվիլու առաջարկի: Այդպես էլ թարգմանել են հոգվածագիրները ^Բari բառը, որի համար մի նոր հիմնավորող փաստ են համարել արձանագրության 4-րդ տողի վերը նշված նորամուտ արտահայտությունը:

Անշուշտ, եթե ամեն ինչ պարզ լիներ, կարելի էր նաև այդպես մտածել, բայց նախքան Գ. Մելիքիշվիլու թարգմանությունը լրացուցիչ փաստով «հիմ-

նավորելը», ինչպես և ^Եašihusi-ն հեթիթական ^Եšinapši-ի հետ զուգորդելը, անհրաժեշտ էր նկատի ունենալ անխտիր բոլոր տվյալները՝ կապված

^Եari, ^Եašihusi կառույցների, սրանց հետ կիրառվող šū-, zadu-, šidistu—բայահիմքերի, ինչպես և շատ այլ հանգամանքների հետ, առանց որոնց հնարավոր չէ այս կամ այն դիտողությունը ընդունել կամ մերժել: Ցավոք, հոգվածի հեղինակները այլ մոտեցում են ցուցաբերել, որը չի կարող օգնել հարցի լուծմանը: Եվ ահա, թե ինչու:

Ամենից առաջ քննության առարկա արձանագրությունը իր նախնական տեղում չի գտնվել, իրենց իսկ վկայությամբ (էջ 164—165)՝ մի կարևոր հանգամանք, որը ամենահավաստի փաստը կլիներ որոշելու այդ կառույցի ինչ լինելը:

Երկրորդ՝ նույնատիպ արձանագրություններից միակը, որ գտնվել է իր նախնական տեղում, նույնպես չի պատասխանում այդ հարցին, քանի որ իտալացի ուրարտագետ Մ. Սալվինիի վկայության համաձայն (Urartäische epigraphisches Material aus Van und Umgebung, 1973.—Beleiten Cilt: XXXVII, Ankara, S. 279—280), միջավայրի ուսումնասիրությունը ոչ մի հիմք չի տվել այդտեղ որևէ ամբար տեսնելու, չնայած ինքը՝ Սալվինին էլ, հետևելով Գ. Մելիքիշվիլուն, ^Բari-ն նույն «ամբար» բառով է թարգմանում:

Հավանաբար, Արին-բերդի արձանագրություններից որևէ մեկը պատասխաներ այս հարցին, եթե պեղման վայրը չընկներ հորատող մեքենաների երախը. բանն այն է, որ նշված արձանագրությունները հիմնականում հայտնաբերվել են բուլղոզերների միջամտությամբ, հատկապես 1960-ական թթ. երկրորդ կեսին, իսկ տեղանքը անհրաժեշտ ուսումնասիրության չի ենթարկվել:

^Բari բառի մասին մենք առիթ ենք ունեցել խոսելու դեռևս 1950-ական թթ. սկսած (Մ. Իսրայելյան. Արին-բերդի SUSI տաճարը և նրա արձանագրությունները.—ՉՍՄ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 9, էջ 103, ծան. 1: Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն. Երևան, 1971, Հավելված՝ էջ 41—47 և այլուր): Այդ կառույցի մասին հաղորդող հնագույն արձանագրությունը գտնվել է Արին-բերդ բլրի հարավային լանջին. նույն կառույցը հիշատակող մի այլ արձանագրություն, նորից Արին-բերդից, գտնվեց 1959 թ. ամրոցի հարավային պարսպին զուգահեռ շենքի պատի վրա, շրջված վիճակում («Էրեբունի...», № 8, 9): Հիշեցման կարգով համառոտ նշենք ^Բari «ամբար» մեկնաբանությունը հերքող մեր նախկին դիտողությունները և ավելացնենք նորերը.

ա) Արձանագրություններից և ոչ մեկը իր տեղում չի գտնվել:


բ) Դրանք չեն հանդիպել երկուսից երեք մետր բարձրության վրա պահպանված պատերին. գուցե թե տեղադրված են եղել ավելի բարձր:

գ) Արին-բերդից գտնված 16 տողանի արձանագրության մեջ այն հիշատակված է ^Եašihusi կառույցի հետ: Այժմ քննարկման ենթակա նոր արձանագրության մեջ հանդիպում է նույն ^Եašihusi-ն, որի տակ է, բառացի ընկալումով, ^Բari-ն:

դ) Նախկին «բերդ» թարգմանությունը չի կարող ճիշտ լինել:

ե) «Քափի»-ների ամենամեծ թիվը 18400 է, ամենափոքրը՝ 1432. վերջինը, ըստ երևույթին, պատրաստվել է լրացման կարգով:

- դ) 'ari-ի պաշտամունքային կառուցվածք լինելը բացառվում է:
 է) Հակառակ Մինուայի ու Ռուսա I-ի ջրանցքաշինարարական գործունեության, ոռոգման լայն համակարգ ստեղծելուն, 'ari հիշատակող վավերագրերը նրանց անունով գրեթե չկան:
 բ) Կարմիր-բլուրում պեղումներով բացվել են բազմաթիվ մառաններ, ամրարներ, բայց չի հանդիպել 'ari-ն հիշատակող ոչ մի տող. սրան հակառակ պատկեր է ներկայացնում Արին-բերդը:
 թ) Տնտեսական բնույթի պահեստները հատուկ շենքեր չեն եղել, ըստ երևույթին, դրանք գտնվել են խոշոր կառույցների ներքնահարկերում, ուստի և լուսանկարները արձանագրություններ չէին կարող ունենալ:



ժ) Եթե 'ari-ն «ամբար» նշանակեր, Ռուսա III-ը հարկադրված չէր լինի Ուրարտուի վերջին օրերին մի նոր 'ari կառուցելու, այն էլ խիստ աննշան չափի (1432 kapi):

Հետաքրքրական է նշել, որ 'ari-ն «հացի շտեմարան» թարգմանողները, անդամ մառաններ ու ամրարներ բացողները հարց չեն տալիս իրենց, ինչու 'ari-ի մասին խոսող վիճաբերը ամրարներ ու մառաններ եղած վայրերում կամ իսպառ բացակայում են, կամ մեկ-երկու փաստով են հայտնի, ինչպես Կարմիր-բլուրում, որը ենթարկվել է ամենածավալուն պեղումների, Արգիշթի-խինիլիում գտնվել է ընդամենը երկու արձանագրություն, իսկ միայն Արին-բերդում՝ եղածի (մեզ հայտնի) մեծագույն մասը՝ 21-ից 12-ը: Մնացած 9-ը՝ վեց աարերի վայրերից: Եթե մտածենք, որ Արևմտյան Հայաստանում լայնածավալ պեղումներ չեն կատարվել (թեև դա ճիշտ չի լինի), այնուամենայնիվ, մեզ մոտ Արին-բերդի, Արգիշթիխինիլիի և Կարմիր-բլուրի համեմատական ուսումնասիրությունը պերճախոս վկա է 'ari—«ամբար» թարգմանությունը հերքելու: Բայց թե որոշակի ի՞նչ նպատակի է ծառայել 'ari-ն, դժվար է ասել. համենայն դեպս, մենք մնում ենք նույն կարծիքին. այն ամբար չի կարող լինել, համաձայն առաջօր մեզ հայտնի տվյալների, մանավանդ «նկուղատիպ» ամբար, ինչպես առաջարկում են քննարկվող հոգվածի հեղինակները, 4-րդ տողը ընկալելով բառացի:

Հայ մեծ արևելագետ Գր. Ղափանցյանը 'ari-ն թարգմանել է «աշտարակ» բառով (Ուրարտուի պատմություն. Երևան, 1940, էջ 222 և այլուր). ինչպես վերը նշվեց, մենք այն համարում ենք ռազմապաշտպանական բնույթի կառույց. մեր մի զեկուցման առթիվ հետաքրքիր միտք հայտնեց հնագետ-պատմաբան Մորուս Հասարթյանը (1956 թ.), համաձայն որի 'ari-ն կարելի է թարգմանել «պատ լայարիսպ» բառով (տե՛ս Մ. Մ. Հասարթյան. Պատմահնագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1985, էջ 8—9. հիշենք վերը նշված պարբայի մոտի արձանագրությունը): Սրանք ճշմարտությանը մոտ թարգմանություններ են: Կարևոր է նշել նաև, որ ակադ. Գ. Զահեկյանը 'ari-ն համարում է հնդեր. բառարմատ. ըստ հին հնդկերենի նշանակում է՝ «ցանկապատ» թա-

քըստոց||պատնեշ||պաշտպանություն» և այլն (Урартский и индоевропейские языки, 1963, с. 97):

'agi-ի հետ առնչվող մյուս բառիմաստների քննարկումը առավել համոզիչ է դարձնում, ինչպես կտեսնենք, այդ հերքումը:

Ամենակարևոր փաստը, որի հիման վրա էլ Գ. Մելիքիշվիլին 'agi-ն թարգմանել է «հացի շտեմարան» (ВДИ, 1951, № 4, с. 25), Սարգսուր II-ի տարեգրության մեջ հանդիպող մի հատվածն է (ՄՀԽ. 155, G, ցր. 10), որ ուշադրումով հիշատակել է նաև Ն. Հարությունյանը իր մի հոդվածում: Մի այլ բնագրում, սակայն («էրեբունի...», Հավելված, № 25, ծան. 7), արի բառին փոխարինող BANEŠ = «տարածական» չափի գաղափարագիրը որոշակի ցույց է տալիս, որ 'agi-ն պարտադիր չէ կապել հացահատիկի հետ (այդ առթիվ տե՛ս մեր՝ «էրեբունի...», էջ 44—45, ծան. 45). «քափին», ուրեմն, նաև տարածական չափ է, մակերեսային կամ ծավալային առումով): (René Labat Manuel d'épigraphie akkadienne. Paris, 1959, № 339):

5 Եթե 'agi-ն նշանակում է «աշտարակ», «պարիսպ» կամ նման մի բան, երևի «բարձրացնել (°)» բայը ամենահարմարը լինի ՏՆ-(ni) բայարմատի համար. չի բացառվում, սակայն, որ 'agi-ն եղած լինի ռազմական իմաստով «թաքստոց||քողարկված դիտակետ» և այլն. նման դեպքում, թերևս, ավելի հարմար լինի «փորել||հորել» բայը և այլն: Առաջիկ հակված ենք ընդունել առաջին ենթադրությունը, մինչև որ 'agi-ն հիշատակող արձանագրություններից որևէ մեկը հայտնաբերվի իր նախնական տեղում:

Բոլոր դեպքերում, գտնում ենք սխալ ՏՆ- բայը նույնացնել šidištu— «կառուցել» բայի հետ, քանի որ առաջինը, առանց բացառության, մշտապես կիրառվում է միայն ու միայն 'agi կառույցի հետ և, ուրեմն, ՏՆ-ն շինարարական առանձին երանգ է արտահայտում կապված, անկասկած, 'agi կառույցի բովանդակության հետ: ՏՆ- բայի թարգմանության համար իրենք կիրառել են «կառուցել» բայը, որը, իբր, առաջարկել է Գ. Մելիքիշվիլին. իրականում Գ. Մելիքիշվիլին այն թարգմանել է ռուսերեն «устранять», «создавать» բառով (ՄՀԽ, с. 407, №№ 135, 139, 162—164, 288), որ հայերենում ավելի ճիշտ կլինեի թարգմանել «սարքել, կարգավորել, ստեղծել», իսկ «կառուցել» (šidištu-) բայի համար նույն Գ. Մելիքիշվիլին իրավամբ կիրառել է «построить», «сооружать» ավանդաբար մեզ հասած թարգմանությունը (նույն տեղում, էջ 406—II ս.): Ասենք, որ ՏՆ- բայը ունի տարբեր թարգմանություններ՝ ըստ Ի. Մ. Դյակոնովի «լցնել», «ցանել||շաղ տալ» («насыпать»). ըստ Մ. Սարգսիի՝ «անել||կատարել» (hat-gemacht) և այլն:

6 Քննարկվող հոդվածի հեղինակները փորձել են պարզաբանել նաև ^Է ašihusi/e կառույցի իմաստը և եկել են այն եզրակացության, որ դա պաշտամունքային վայր է, ուրեմն կարելի է զուգահեռ անցկացնել հեթիթական ^Է šinapši շինության հետ:

Նախ անդրադառնանք ^Է ašihusi բառին. կարծում ենք, այս դեպքում էլ հոդվածի հեղինակները անհրաժեշտ բոլոր տվյալները չէ, որ նկատի են ունեցել, որի հետևանքով էլ եզրակացությունը համոզիչ չէ: Բառի կիրառության տասներկու (6 արձանագրությունից) փաստ է հայտնի մեզ, որից 9-ը (3 արձ.) հիշատակում են Մինուային, 2-ը՝ Արգիշթի I-ին, 1-ը՝ Սարգսուր II-ին: Բոլոր դեպքերում բառը կրում է ^Է «տուն» բացահայտիչը, ի՛նչ վերջավորությունը և կիրառվում է zadu—«հիմնադրել(°)» բայի հետ. բացառություն է կազմում այս արձանագրությունը, ուր այդ բառը տարբեր կապակցությամբ է ներկայանում, ուստի և բառավերջում ընդունել է պատկանելության ֆունկցիան նշող -ni վերջածանցը:

Նշված բոլոր բնագրերում, բացի մեկից (Արին-բերդ, Սարգուր II-ի արձ., որ բնագիրը սկսվում է «Խալդյան մեծությամբ» նախաբանով), որն է ձևով, որն է աստվածություն կամ ծիսակատարական որն է անկարկ չկա: Այս կարևոր հանգամանքը վրիպել է հոգվածի հեղինակների ուղադրությունից:

Մեջբերված տվյալները պարզորոշ խոսում են այն մասին, որ ^Ե ašihusi-ն սյուսաբիկ բովանդակությամբ մի կառույց է:

Այնուհետև նրանք դիմել են բառի լեզվագիտական վերլուծությանը ելա-կետ ունենալով սոսկ արտաքին հնչյունական նմանությունը և ^Ե ašihusi-ի արդյունքում լինելը և ^Ե aših- բայարմատի հետ, որի համար ոչ մի լուրջ հիմք չունենա: Բանն այն է, որ ^Ե aših- բայարմատը, ինչպես թելադրում են բառի կիրառման փաստերը (5 փաստ, 4 արձանագրությունից, ոչ մի կապ չունի ^Ե ašihusi-ի հետ. այդ բայածեր մեր թարգմանությունում նշանակում է «տալ /|նվիրարկել|/ ձոնը», երբեմն հաջորդում է urbūlū «զոհարկել» բային և հանդիպում է կրոնա-ծիսակատարական բնագրերում (ՄԿԽ, № № 19, 65, 83, 81) միշտ բառարմատի միևնույն դրաժյամբ՝ ^Ե aših-(u)ni, -lie, -me): Նշված բայարմատը (^Ե aših-) կարելի է համեմատել նորից ծիսակատարական բնագրերում հանդիպող ^Ե ašihāšlī- բառի հետ: Կարևոր է նկատի առնել, որ ^Ե aših-բառարմատը երկու գեղջում էլ երբեք չի դրվում ^Ե aših-ձևով, ինչպես և ^Ե aših- baysi լայնիմքը երբեք չի հանդիպում ^Ե ašihusi ձևով, թեև գրական վրանկարգին կդանակը չէր կարող խանդարել նման դրաժյամբ՝ ^Ե aših- u-si, բայց չեն դրել, որովհետև դրանք տարբեր բառարմատներ են, (a)š- և h(u)- վանկերի միջև ընկած -i-ն արմատական հնչյուն է և, մեր համոզմունքով, պատկանում է ^Ե aših «վահան» բառին, որը, անկասկած, -e>i փոխանցման օրինաչափությամբ, բառարգման հետևանքով դարձել է -i: Հնչյունափոխության այս շրջանափակությունը ունենք և հայերենում՝ սեր-սիրել, տեր-տիրել, տիրակալ, պատվեր, պատվիրել և այլն:

Հայերենում է>ի հնչյունափոխությունը հետևանք է շեշտի փոփոխության. չի բացառվում նման երևույթի առկայությունը Վանի թագավորության սեպագրերի լեզվում:

Հոգվածի հեղինակները, նորից առաջնորդվելով բառերի արտաքին հնչյունային նմանությամբ, փորձում են կատարել մի այլ զուգորդում, անկախ նրանից թե նման օրինաչափություններ կա՞ն տվյալ լեզուներում: Առաջինը արդեն, որ նրանք, առանց լուրջ հիմնավորման, ^Ե ašihusi-ն հայտարարում

են պաշտամունքի վայր և հետո այն նմանեցնում հեթիթական ^Ե šinapši կառույցին, վկայակոչելով խեթագետ Ա. Առաքելյանի մի հոդվածը («Պատմա-րանսիական հանդես», 1975, № 3): Մենք ծանոթացանք այդ հոդվածին: Բանն այն է, սակայն, որ Ա. Առաքելյանի հոդվածը ^Ե ašihusi և ^Ե šinapši զուգորդման համար ոչ մի հիմք չի տալիս, եթե նկատի չառնենք երկու դեպքում էլ ^Ե š/s հնչյունների առկայությունը, որ ինքնին ոչ մի արժեք չունի: Հեթիթական կառույցը, ինչպես ներկայացնում է հոգվածագիրը, զտարյուն ծիսակատարական վայր է, այն էլ հատուկ, ծննդաբերության հետ կապված ծիսակատարությունների վայր. մեջբերված հատվածը պատմում է աստված-ներին նվիրաբերվող զոհաբերությունների (թուլուն, ոչխար, հաց, ջրով մաքրումներ և այլն, և այլն) մասին, մի բան, որ, արդեն տեսանք վերևում, իսպառ

բացակայում է ուրարտական ^Ե ašihusi-ն հիշատակող բնագրերում:

Ինչպես տեսնում ենք, լեզվագիտական որոշակի օրինաչափությունները բոլոր չեն տալիս ^Ե aših-(u)ni և ^Ե aših- hu- բառահիմքերը համատեղել:

ašihusi-ն թարգմանել ենք «վահանանոց» իմաստով, նկատի ունենալով նմանակազմ urīšihusi բառը, որ դեռևս 1947 թ. թարգմանել ենք «զինանոց», տվյալ բառը վերականգնելու առիթով (Պետ. համալսարանի Ն. Մառի անվ. կարիքների «Աշխատություններ», № 2, 1947, էջ 216—219):

Մոտավորապես նույն կերպ է թարգմանել ašihusi-ն նաև գերմանուհի ուրարտագետ Մ. Ռիմշնայդերը՝ «վահանասրահ» (Orientalia, Vol. 34, F. 3, 1965, S. 319), որին չեն հիշատակել Ռ. Թորոսյանն ու Ս. Հմայակյանը, մինչդեռ Մ. Ռիմշնայդերը մի ընդարձակ հոդված է նվիրել ուրարտական բնագրերում հանդիպող գրեթե բոլոր կառույցներին: Հոդվածում չի հիշատակված նաև Մ. Սալվինին և ուրիշներ: Բերված է միայն Ֆ. Քյոնիգի կարծիքը, որը նույնպես առանց որևէ հիմքի aših-ն համարել է տաճար, իսկ «տաճարը» արդեն կարելի էր համեմատել հեթեթական նմանահունչ սրբավայրի կամ օջականի նյութերի հետ (sic?):

Մենք առաջմ որևէ հիմք չունենք հրաժարվելու վերահիշյալ ^Բ ašihusi «վահանանոց», ^Ե urīšihusi «զինանոց» թարգմանություններից, քանի որ նոր նյութերն ու կարծիքները պատմականորեն-լեզվագիտորեն, ինչպես տեսանք, որևէ չափով գերադասելի հիմնավորում չունեն:

7. Նման դեպքում pi-ի «տակ» վաղուց հայտնի բառը կարելի է ընկալել նաև «ստորոտ» իմաստով, և ոչ թե նկուղ, ինչպես առաջարկում են հոդվածի հեղինակները: Այսպիսով՝ pi-ի «տակ» ստորոտ. գուցե և «ցած» ներքև» և այլն: Ինչպես հայտնի է, բառերը միանշանակ չեն (հմտ. հայերեն՝ «բլրի սակ», «ամրոցի տակ», որ ավելի նշանակում է «բլրի» ամրոցի ստորոտում)։ տվյալ դեպքում մենք գործ ունենք, ըստ երևույթին, հայերենի (նաև որոշ այլ լեզուների) ու Վանի թագավորության բնագրերի լեզվամտածողության (այստեղ՝ ոճական) ընդհանրություններից մեկի հետ, ինչպես, օրինակ, ունենք՝ հաշվելու տասնորդական համակարգի առկայությունը երկուստեք, հակառակ ասենք, վրացերենի, բաղաձայնների կուտակման բացակայությունը, նորից հակառակ վրացերենի, հնչյունական եռաստիճան համակարգը և մի շարք այլ կարևոր էթնիկ արժեքի ընդհանրական երևույթներ:

Մի դիտողություն ևս. ^Ե ašihusi/e կառույցը հիշատակում են գլանաձև սյան երեք խարխսի (6 արձ.), Մինուայի անունով, յուրաքանչյուրը նույն բնագրի եռակի կրկնությամբ (Նդիբիլիսա, Վան, հուրկում): Սյան բազմաթիվ այլ խարխսիներ իրենց վրայի արձանագրություններով հաղորդում են E-/e/ կառույցների մասին, որոնց հետ կիրառված է նույն zadu—բայը: Շատ հնարավոր է, որ ^Բ ašihusi-ն լինի նույն ^Ե E-(e)-ի համարժեքը կազմող բառային-արտահայտությունը և, ուրեմն, ^Ե E-(e)-ն նշանակի «վահանանոց»՝ համաձայն մեր թարգմանության: Այն սովորաբար թարգմանվել է «տաճար» իմաստով, իսկ Մ. Ռիմշնայդերը ընկալում է որպես ախոռ (ձիանոց, Marstalle, տե՛ս վերը նշված հոդվածը, էջ 312 և հտ.): Երկու թարգմանություններն էլ համոզիչ չեն. ինչ խոսք, եղել են և ախոռներ, բայց նրանց համապատասխան բառերը կամ մեզ չեն հասել, կամ դեռևս չենք ընկալել: Վերը նշած մեր ենթադրությունը՝ ^Ե ašihusi/e և ^Ե E-(e)-ի նույնության մասին, կարիք ունի լրացուցիչ հիմնավորման. թերևս այդ արձանագրված գլանաձև քարերը ոչ թե սյան հիմքեր են, այլ պատմանդաններ ու իրենց վրա կրել են (ցուցադրական թե մի այլ նպատակով) բրոնզե վահաններ, սաղավարտներ, արձաններ և այլն:

Մի բան պարզ է, որ դրանք ո՛չ սրբավայր են, ո՛չ էլ ախոռ:

Ամփոփենք. պատմահնագիտական տվյալների համաձայն ^(Ե) aših-ն չի կարող «հացի շտեմարան» նշանակել, այն էլ՝ «նկուղատիպ շտեմարան».

կարգում ենք, այն ավելի շուտ ռազմապաշտպանական բնույթի կառույց է: Սխալ է հն-/ni բաժը նույնացնել *šidištu-/ni* «կառուցել» բառի հետ, որ հետևանք է լեզվական տվյալների տնտեսման: Սխալ է այս առթիվ Գ. Մելիքիշվիլուս վկայակոչելը, քանի որ Գ. Մելիքիշվիլին հստակորեն տարրերն է դրանք իրարից:

Պատմալեզվագիտական տվյալների համաձայն բացահայտվում է *ašihusi-*ն պաշտամունքային վայր համարելը և, ուրենն, հիմնավոր չէ դրա զուգորդումը հիթիթական *šinapš'*, իրոք, պաշտամունքային վայրի հետ: Բացառվում է նաև *aš-(husi)* կառույցի և *ašh-(ulini)* բաղաձևի զուգորդումը. դրանք տարրեր բառարմատներ են և ոչ ոք առնչություն չունեն միմյանց հետ: «Տակ» *pi-*ի բառը տվյալ դեպքում կարելի է ընկալել «ստորոտ ստորև» իսաստով, որպես «տակ» բառի հոմանիշ: *Karī=BANEŠ* նշանակում է նաև մակերեսի, տարածական շափի սիավոր և պարտադիր չէ այն կապել հացահատիկի հետ:

УТОЧНЕНИЕ ИНТЕРПРЕТАЦИИ ОДНОЙ АРМАВИРСКОЙ НАДПИСИ

М. А. ИСПАЕЛЯН

Резюме

Изучение древней истории, как известно, требует тщательного исследования всех данных. Лингвистические факты (как и археологические) требуют более серьезного подхода и строго лингвистического мышления. Однако иногда в трактовке научных текстов встречается упрощение.

Так, в «Историко-филологическом журнале» (1981, № 4, с. 160) была опубликована армавирская (Аргиштихинили) новонайденная надпись Аргишти I в пяти строках. В надписи говорится о постройках *É.arī*, *É.ašihusi*. В статье неубедительно звучат интерпретации слов: *É.arī*, *šū-(ni)*, *É.ašihusi*, *pi-* и т. д.

I. По историко-археологическим данным *É.arī* вряд ли может быть «зернохранилищем», да еще «посреброподобным» хранилищем, *arī*, по всей вероятности, помещение военно-оборонительного характера. Глагол *šū-(ni)* имеет особый смысл и нельзя равнять его с глаголом *šidištu*—«построить». Неуместна по этому поводу ссылка на акад. Г. А. Мелликишвили, который ясно представляет эту разницу. Слово *karī* в одной аринбердской надписи заменено идеограммой *BANEŠ*, что значит—мера «емкости», как и мера «поверхности», «длины». Значит, не обязательно *karī=BANEŠ* связывать с зерном.

II. По сугубо историко-лингвистическим данным вовсе исключается *É.ašihusi* принимать как культовое сооружение и, следовательно, в корне ошибочно сопоставление его с хеттским *šinapš'*, несомненно, культовым помещением. *É.ašihusi* также ничего общего не имеет с глаголом *ašh-u-lini*, что переводится «дать, подарить, посвящать», который встречается со словом *igbulini*—«жертвовать» только в надписях культового содержания. Наконец слово *pi-(l/e)*—«под» можно заменить другим синонимом («под», «внизу» и т. д., в арм. «առիկ||ստորոտով||ստորև» և այլն), а не «под зданием».